Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
07.07.2017թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ **10210**
որից՝

	ԹՎԱՔԱՆԱԿ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	421	4.1
դիմում	9291	90.1
բողոք	498	4.8
կրկնակի	275	2.6
կոլեկտիվ	18	0.17

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ **2985**

	ԹՎԱՔԱՆԱԿ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	1510	50.5
բողոք	1475	49.4

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԱԿ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	118	10.3
կոմունալ-կենցաղային	26	0.25
շինարարական	5	0.04
առձեռն (տրանսկապ)		
գյուղատնտեսական	7	0.06
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	477	4.6
առողջապահության	1201	10.07
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	1324	11.2
օրենսդրական	89	0.8
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	867	8.4
ապարատային	150	1.4
այլ հարցեր	5940	58.1
սեփականաշնորհում	6	0.05

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2017Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 10210 նամակներից մոտ 4.1%-ը եղել են առաջարկություններ, 11.2% հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 4.8%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ՝ դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 90.1%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասն առնչվում է առողջապահական հարցերին 10.07%, մոտ 8.4%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 10.3%-ը առնչվում է բնակարանային, 0.25%-ը կոմունալ-կենցաղային, 1.4%-ը ապարատային, իսկ մնացած՝ մոտ 58.1% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնում ենք, որ ստացված դիմումներից 9893-ին տրվել է գրավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 317-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է: